



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

16 նոյեմբերի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝	Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝	Վ. Գրիգորյանի
	Ա. Թունյանի

Քննության առնելով «Արտադրա-տպագրական»

ՓԲԸ-ի դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն (ներկայացուցիչներ՝ Արտակ Զեյնալյան, Կարեն Տոնոյան) 2020 թվականի հոկտեմբերի 16-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1, 3, 4, 10, 60 և 61, 63, 78, 79 ու 80, 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Քաղաքացիական» ՀՕ-233-Ն օրենսգրքի մինչև 23.06.11 թ. խմբագրությունը գործած 251-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված իմաստը՝ հաղորդած բովանդակությամբ հանդերձ, համաձայն որի՝ գրավառուի և գրավատուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքը օտարելու պահի դրությամբ, այլ ոչ թե՛ գրավի առարկան որպես սեփականություն ընդունելիս»:

Դիմումի և դիմումին կցված նյութերի բովանդակությունից հետևում է, որ դիմողը Սահմանադրական դատարան է դիմել՝ վիճարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Վկայակոչելով իրավական որոշակիության և սեփականության իրավունքի պաշտպանության վերաբերյալ Սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, արձանագրելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայության փաստը՝ դիմողը գտնում է, որ վերը նշված վիճարկվող նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար, որպես հակասական իրավակիրառ պրակտիկայի դրսևորման ապացույցներ, դիմողը վկայակոչում է թիվ ԵԿԴ/0384/02/13 և դիմողին վերաբերող թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործերով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Դրանցից առաջինով Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ, և գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն այդ օրվա

դրությամբ: Իսկ երկրորդ գործով Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքն իրացնելու պահի դրությամբ:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ երկրորդ գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման պարագայում դիմողը եզրահանգում է, որ եթե գրավառուն գրավադրված գույքն իրացնի 10 տարի հետո, ապա գրավատուն կարող է միայն 10 տարի հետո ստանալ գույքի իրացումից հետո մնացած՝ իր պարտավորության չափը գերազանցող գումարը, իսկ եթե գրավառուն ի սեփականություն իրեն անցած գույքն ընդհանրապես չիրացնի, ապա գրավատուն երբեք չի ստանա գույքի իրացումից հետո իր պարտավորության չափը գերազանցող գումարը, ինչն էլ կհանգեցնի անձի սեփականության իրավունքի խախտման:

Դիմողի պնդմամբ՝ մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասն ունի այն բովանդակությունը, համաձայն որի՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ, և գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն այդ օրվա դրությամբ: Դիմողը վիճարկում է 2020 թվականի մայիսի 8-ի թիվ ԵՄԴ/1206/02/09 որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից օրենսգրքի նորմին տրված մեկնաբանությունը, համաձայն որի՝ գրավառուի և գրավատուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքն օտարելու պահի դրությամբ, այլ ոչ թե՝ գրավի առարկան որպես սեփականություն ընդունելիս:

3. Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է ընդունման, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է Սահմանադրական դատարանին,

- դիմողն իրավասու է դիմել Սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի՝ (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել Ազգային ժողովին:

Նախագահող՝
Անդամներ՝



16 նոյեմբերի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-58